



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5

N 34

„ 10 „, ապրիլի 2017թ.

### ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԶԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԲՈՒԺՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Հիմք ընդունելով Զառիթափ համայնքի բնակիչ, առաջին խմբի հաշմանդամ Վիգեն Վարուժանի Հարությունյանի 2017թ. մարտի 17-ի դիմումը, „Հայաստանի Հանրապետության 2015թ պետական բյուջեի մասին,, Հայաստանի Հանրապետության 7-րդ հոդվածի, „Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասի, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետի պահանջներով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից, քաղաքացի Վ. Հարությունյանի „ՎՏԲ-Հայաստան,, բանկ ՓԲԸ-ի թիվ 16010037711000 դրամային հաշվին փոխանցել 50 /հիսուն/ հազար ՀՀ դրամ վերջինիս ողնաշարային կոտրվածքի վերականգնողական բուժումը արտասահմանում իրականացնելու նպատակով:

2. Մարզի համայնքների ղեկավարներին, ենթակա ՊՈԱԿ-ների և ՓԲԸ-ների տնօրեններին՝ առաջարկել՝ հնարավորության սահմաններում, ոստիկանության Վայքի բաժնում ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ 2011թ. ավտովթարից ողնաշարային կոտրվածք ստացած Զառիթափ համայնքի Բարձրունու տեղամասի 30-ամյա բնակիչ Վ. Հարությունյանին վերականգնողական բուժմանն աջակցելու նպատակով ֆինանսական օգնության գումարները ուղղել 16010037711000 ՀՀ դրամային, 16010037711001 ԱՄՆ դոլարային և 16010037711003 ռուսական ռուբլով հաշիվներին:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ օրենքով սահմանված կարգով ենօրյա ժամկետում կատարել գումարի վճարում:



Հ. ՍԱՐԳՍՅԱՆ